ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2025 թվականի N 734-Ա

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՉԱԳԱՆ ՇՄԱՎՈՆԻ, ԹԵՐԵԶԱ ԱՂԱՍՈՒ, ՎԱՐԴԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ, ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԻ և ՀԱՅԿԱՆՈՒՇ ՎԱՉԱԳԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ 20%-ԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ 30%-Ի ՉԱՓՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վաչագան Հակոբյանի (ծնված՝ 15.01.1950թ.) դիմումը /մտից մատյանի՝ 14.01.2025թ. թիվ 359/:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Մասիս համայնքի Մասիս քաղաքի 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի ընդհանուր մակերեսը փաստացի կազմում է 0,19193 հա, որից 0,12 հա մակերեսով հողամասը հանգուցյալ Հայկանուշ Բեյբուդի Մուրադյանի ընտանիքի սեփականությունն է, որի ժառանգը ընդունել է ժառանգությունը, սակայն չի ձևակերպել իր ժառանգական իրավունքները: Օրինական հողամասի մինչև 20%-ը 0,0240 հա հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել սեփականության իրավունքով Վաչագան, Թերեզա, Վարդան, Վարուժան Հակոբյաններին և Հայկանուշ Բարսեղյանին իսկ 20%-ից ավել օգտագործվող 0,04793 հա հողամասը սահմանված կարգով օտարել Վաչագան, Թերեզա, Վարդան, և Վարուժան Հակոբյաններին ու Հայկանուշ Բարսեղյանին տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 30%-ի չափով:

Հաշվի առնելով, որ անհատական բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թ. մայիսի 15-ը և բնակելի տան զբաղեցրած ու դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի և 3-րդ մասի պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ապա ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի և 3-րդ մասի ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով և ընդառաջելով Վաչագան Հակոբյանի խնդրանքին՝ ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Մասիս համայնքի Մասիս քաղաքի 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վաչագան Շմավոնի Հակոբյանի (ծնված՝ 15.01.1950թ. անձնագիր՝ AL 0786990, տրված՝ 31.10.2023թ. 044-ի կողմից), Թերեզա Աղասու Հակոբյանի (ծնված՝ 25.02.1959թ., նույնականացման քարտ՝010010601, տրված՝ 24.01.2018 044-ի կողմից), Վարդան Վաչագանի Հակոբյանի (ծնված՝ 23.07.1977թ. նույնականացման քարտ՝ 010010627, տրված՝ 24.01.2018 044-ի կողմից), Վարուժան Վաչագանի Հակոբյանի (ծնված՝ 08.10.1979թ., անձնագիր՝AX 0208083 տրված՝ 09.04.2024 044-ի կողմից) և Հայկանուշ Վաչագանի Բարսեղյանի (ծնված՝ 03.05.1984թ., նույնականացման քարտ՝ 006587331 տրված՝ 03.09.2015 044-ի կողմից) իրավունքները բնակելի տան և դրան կից օժանդակ շինությունների մասով, ճանաչելով նրանց սեփականության իրավունքները անհատական բնակելի տան և կից օժանդակ շինությունների նկատմամբ:

2. Ճանաչել Մասիս համայնքի Մասիս քաղաքի 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող միավորի նկատմամբ Վաչագան, Թերեզա, Վարդան, Վարուժան Հակոբյանների և Հայկանուշ Բարսեղյանի սեփականության իրավունքը օրինական հատկացված 0,12 հա մակերեսով հողամասի մինչև 20%-ի՝ 0,0240 հա հողամասի նկատմամբ:

3. 20%-ից ավել օգտագործվող 0,04793 հա հողամասը սահմանված կարգով օտարել Վաչագան, Թերեզա, Վարդան, Վարուժան Հակոբյաններին և Հայկանուշ

Բարսեղյանին տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 30%-ի չափով, որը կազմում է 982704 (ինը հարյուր ութանասուներկու հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ:

4. Շենք-շինությունների մակերեսը և հողամասի սահմանները ճշտված են որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված հողամասի հատակագծով (կցվում է):

5. Մասիս համայնքի Մասիս քաղաքի 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե << ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք քաղաք Մասիս 2-րդ փողոց թիվ 12 բնակելի տուն:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
Ք.ՄԱՍԻՍ